



Հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության 373 համայնքներում տեղի կունենան ՏԻՄ ընտրություններ: 36 համայնքում տեղի կունենա միայն համայնքի ղեկավարի ընտրություններ, 82 համայնքում՝ միայն ավագանու անդամների ընտրություններ, իսկ 255 համայնքում միաժամանակ անցկացվելու են համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններ: Նշենք, որ 2016-ի ՏԻՄ ընտրությունների ժամանակացույցը հաստատվել էր անցյալ տարի՝ սեպտեմբերի 11-ին կայացած ԿԸՀ նիստում : Հոկտեմբերի 2-ին Բյուրեղավան համայնքում տեղի կունենա միայն ավագանու ընտրություններ: 2016 թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 18.00-ին, լրացել է թեկնածուների գրանցման ժամկետը: Կոտայքի մարզի թիվ 27 ԸԸՀ-ում առաջադրված բոլոր թեկնածուները գրանցվել են: Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ է գրանցվել 14 թեկնածու: Գրանցված թեկնածուներից 8-ը արդեն մի քանի անգամ ընտրվել է, իսկ 4-ը՝ նոր թեկնածուներ են: Byureghavan. am-ը ներկայացնում է թեկնածուների տվյալները՝ անուն, հայրանուն, ազգանուն, որ կուսակցությունից է և որ կուսակցությունն է թեկնածուին առաջադրել:

- | | |
|-------------------------------|--------------------------------|
| 1. Գեորգի Սոսոյի Աղաջանյան | անկուսակցական, ինքնաառաջադրում |
| 2. Ավետիք Գառնիկի Ասոյան | անկուսակցական, ՀՀԿ-ից |
| 3. Հայկազ Պապի Բաղդասարյան | անկուսակցական, ՀՀԿ-ից |
| 4. Կարեն Ավագի Դանիելյան | անկուսակցական, ինքնաառաջադրում |
| 5. Արթիկ Հայրազատի Եղիազարյան | անկուսակցական, ՀՀԿ-ից |
| 6. Նարեկ Սամվելի Թովմասյան | անկուսակցական, ինքնաառաջադրում |

- 7. Արման Վարդանի Խանգաղյան անկուսակցական, ինքնաառաջադրում
- 8. Վոլոդյա Ազատի Հայրապետյան անկուսակցական, ՀՀԿ-ից
- 9. Սլավիկ Կարապետի Հարությունյան անկուսակցական, ՀՀԿ-ից
- 10. Արզամ Արամի Շառյան անկուսակցական, ՀՀԿ-ից
- 11. Կարինե Էդիկի Չոբանյան ԲՀԿ, ինքնաառաջադրում
- 12. Սերգեյ Սամվելի Սարգսյան անկուսակցական, ինքնաառաջադրում
- 13. Հայկ Գարեգինի Վարդևանյան անկուսակցական, ինքնաառաջադրում
- 14. Արման Ալբերտի Օհանյան ՀՅԴ, ՀՅԴ-ից

Գրանցված ավագանու թեկնածուների քարոզարշավի մեկնարկը կտրվի սեպտեմբերի 14-ին: Այն կավարտվի սեպտեմբերի 30-ին: Այդ ժամանակահատվածում թեկնածուները հնարավորություն կունենան իրենց նախընտրական ծրագրերը ներկայացնել ընտրողներին: Բյուրեղավան համայնքում ձևավորված է 4 տեղամաս՝ 27/1, 27/2, 27/3, 27/4: Համապատասխան տեղամասերում արդեն փակցվել են ընտրացուցակները:

08.09.16.